ԼԻԼԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՖԵՐՐԱՐԱ -ՖԼՈՐԵՆՑԻԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՄ ԵՎ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Քրիստոնեության ընդունումից հետո հրավիրվել են ժողովներ՝ քրիստոնյա երկրների մասնակցությամբ: Այդ տիեզերական ժողովները հաճախ հրավիրվել են Հռոմեականաքոլիկական եկեղեցու կողմից՝ դավանական խնդիրներ քննարկելու համար: Մինչև 1870թ. Վատիկանի ժողովը հրավիրվել է ավելի քան 20 ժողովներ, որոնցից յուրաքանչյուրը որոշակի նպատակ է հետապնդել: Հայաստանը որպես քրիստոնեական երկիր մասնակցել է դրանցից մի քանիսին, սակայն հայոց եկեղեցին ընդունում է առաջին 3 ժողովների որոշումները . Նիկեա (325թ.), Կ.Պոլիս (381թ.), Եփեսոս (431թ.) և տիեզերական ուժ ու հեղինակություն չի տալիս մյուս ժողովներին, այդ թվում և Ֆերրարա-Ֆլորենցիայի ժողովին:

Հայոց եկեղեցին 15-րդ դարում շատ ծանր վիճակում էր.1375թ.վերացել էր Կիլիկիայի թագավորությունը, 1377-1432թթ. իրար հաջորդեցին 6 կաթողիկոսներ, չկար միասնական կաթողիկոսական աթոռ, եկեղեցին բաժանված էր: Այս ժամանակ կաթողիկոս դարձավ Կոստանդին Զ Վահկացին (1429-1439 թթ.), ում կաթողիկոսության ժամանակ տեղի ունեցավ Ֆերրարա-Ֆլորենցիայի ժողովը:[1]

13-րդ դարի երկրորդ կեսից պապական իշխանությունը անկում էր ապրում: Կաթոլիկական եկեղեցին բաժանվել էր երկու մասի. Հռոմում և Ավինիոնում միաժամանակ իշխում էին երկու պապեր.առաջացել էր այսպես կոչված Արևմտյան հերձվածը:Դա առաջացրեց կաթոլիկական եկեղեցու դժգոհությունը և նրա ներկայացուցիչները պահանջում էին, որ պապական իշխանությունը գտնվի եկեղեցական ժողովների հսկողության տակ: Այդ խնդրի հետ կապված 1311թ. սկսած շուրջ 40 տարի գումարվեցին ժողովներ, ինչը վկայում էր, որ պապական իշխանությունը կորցրել էր իր ուժն ու հեղինակությունը:[2]

---

[1] Մ. Օրմանեան,Հայոց եկեղեցին և յուր պատմությունը,Կ.Պոլիս , 1912 ,էջ101:
[2] Б.Я. Рамм,Папство и Русь в X-XV вв., М.,1959, с.221.

Ժողովը հրավիրվել է Եվգենիոս Դ.(1431-1437 թթ.) պապի կողմից: Նա ձգտում էր իշխանության և փողի ու չէր հաշտվում Բազելի ժողովի այն որոշման հետ, որ ժողովականների իշխանությունը բարձր է պապի իշխանությունից: Այդ նպատակով նա որոշեց գումարել ժողով և հաստատել, որ պապական իշխանությունը բարձր է բոլոր ժողովականների որոշումներից.ինչպես նաև պապական աթոռին ենթարկել Արևելքի եկեղեցին:[3] Այս ժամանակ էր, որ պապին օգնության խնդրանքով դիմեց բյուզանդական կայսր Հովհաննես Ը Պալեոլոգոսը(1425-1448 թթ.) և Եվգենիոս Դ պապին առաջարկեց Կ.Պոլսում գումարել միութենական ժողով, իսկ պապը դա համարեց Բազելի ժողովը ցրելու լավագույն միջոց և հավանություն տվեց:

Մեզ համար կարևոր է այս ժողովը այն պատճառով, որ հաճախ դրանով փորձել են ցույց տալ հայոց եկեղեցու միությունը հռոմեականաթոլիկական եկեղեցուն:

1434թ. Եվգենիոսը, որոշելով գումարել ժողով, թուղթ հղեց Հովհ. Պալեոլոգոս կայսրին, Կ.Պոլսի Հովսեփ պատրիարքին: Ձգտելով միավորել արևելյան եկեղեցին՝ թուղթ գրեց նաև հայոց կաթողիկոս Կոստանդին Վահակացուն և Եսայի արքեպիսկոպոսի միջոցով, որը Կ.Պոլսի հայոց առաջնորդն էր, ուղարկեց կաթողիկոսին:[4] Եսային Աբդլմսլեհ սարկավագի միջոցով ուղարկեց Սիս՝ Կոստանդին Վահակացուն:[5] Պապի այդ նամակը չի պահպանվել, բայց կա Եսայիի պատասխան նամակը, որը սկսվում է հետևյալ բառերով.
«Ամենասուրբ և ամենաերջանիկ Տեառն մերում՝ Տեառն Եվգինես Քահանայապետի», որում Եսային գրում է, որ նամակը ուղարկել է կաթողիկոսին , ինչպես որ պատվիրվել էր և կարծես թե կատարյալ համաձայնություն է տալիս միությանը, թերևս կաթողիկոսը դեռ չէր պատասխանել:

Պապի նամակը 4 տարի մնաց անպատասխան.դա նշանակում էր, որ Սսի աթոռը, հայերը, կաթողիկոսը, ոչ միայն հռոմէադավան չեն, այլև միտում էլ չեն ունեցել միության: Այս ժամանակ պապի պատվիրակ Քրիստափոր Գարատանոսը գնում է Ֆլորենցիա՝ հորդորելու պապին՝ ժողովը գումարել Կ.Պոլսում, որտեղ համաձայն էր գնալ նաև հայոց կաթողիկոս Կոստանդին Ջ Վահակացին: Վենետիկ հասնելով նա թուղթ է գրում Քահանայա-պետին, որում հայերի մասին գրում է, որ «մեծ հույս կա նրանց դարձին, ինչպես որ հունաց միությունը քո ձեռքում է, նույնը պետք է լինի հայերի հետ»: Սակայն պապը որոշում է ժողովը գումարել Իտալիայի Ֆերրարա քաղաքում:

---

[3] К.Н. Ивановь, Средневековое папство и его представители.СПБ, 1915, с. 298-300.
[4] Ս. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ. Բեյրութ1960. էջ-2070:
[5] Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ,Լ.Խաչիկյան,Երևան 1955. էջ 464:

1438թ. հունվարի 1-ին Եվգենիոս Դ-ն հատուկ կոնդակով Բազելի ժողովը լուծարված է հռչակում: Ապրիլի 9-ին Իտալիայի Ֆերրարա քաղաքում պապը բացում է ժողովը, որտեղ պետք է որոշվեր եկեղեցիների միության հարցը: Ժողովին մասնակցում էին հունական կայսր Հովհաննես Ը Պալեոլոգոսը, Կ.Պոլսի Հովսեփ պատրիարքը, ավելի ուշ գալիս են նաև ռուսական եկեղեցու ներկայացուցիչները:[6] Հայերի համար այս միությունը քաղաքական նպատակ ուներ: Իսկ պապը նաև նպատակ ուներ եկեղեցիների միությունով պապական իշխանությանը ենթարկել Արևելքի եկեղեցին՝ առաջին հերթին ռուսական եկեղեցին:[7]

Տարածված ժանտախտի պատճառով ժողովը տեղափոխվում է Ֆլորենցիա: Պապը առանձին պատգամավորություն ուղարկեց հայոց կաթողիկոսին հրավիրելու համար, որը եկավ Կաֆա:[8] Այստեղ կար մեծ թվով հայ բնակչություն՝ ճենովացիների հովանավորության ներքո: Կաֆայում, որպես կաթողիկոսի երեսփոխան, Սարգիս վարդապետը, որը ս.Անտոնի վանքի առաջնորդն էր, մեծ դերակատարում ունեցավ Տիեզերական ժողովին հայերի մասնակցության մեջ:[9]

Հետաքրքիր է, որ պապի հրավերը ուղարկվեց ոչ թե Սիս, այլ Կաֆա, կարծես թե հայության կենտրոնը այստեղ էր: Պապի նվիրակը հասնում է Կաֆա և տեղի ճենովայի հյուպատոս Իմբերիան մայիսի 12-ին Կաֆայի կողմից տիեզերական ժողով ներկայացուցիչ ուղարկելու պահանջ է ներկայացնում: Խորհրդակցական ժողովը տեղի է ունենում հյուպատոսի սենյակում, որին մասնակցում էր Կաֆայի հայոց արքեպիսկոպոս Մաղաքիան: Հյուպատոսը առաջարկում էր «առաքել ի Գենուա կամ առ ամենասուրբ տէր մեր Քահանայապետ կամ առ Սինհոդոսն հրեշտակ մի, իբրև դեսպան նոցա յօգուտ ամենայն քրիստոնեից»: Հայերը խնդրում են, որ իրենց 3 ամիս ժամանակ տան, որ կաթողիկոսի համաձայնությունը ստանան:[10]

Սակայն կաթողիկոսը հրաժարվեց գնալ և իր փոխարեն երեսփոխան ընտրեց Հովակիմ եպիսկոպոս Բերիային, Սարգիս, Մարկոս ու Թովմաս վարդապետներին:[11] Նրանց տվեց իր պատասխան թուղթը, որում ասվում էր, որ ինքը լիազորում է պատգամավորներին իր փոխարեն «երթան Սիւնհոդ,

---

[6] Ф.И. Успенский,История Византийской империи,т.III, М.-Л.,1948, с.771.
[7] Б.Я.Рамм, указ.соч., с. 225.
[8] Ս. Չամչյան,Հայոց պատմություն,հ. Գ., Երևան 1984,էջ 473-474:
[9] Ժե դարի Հիշատակարաններ. էջ 414:
[10] Հ. Գ. Գալէմքեարեան, Կ. Պոլսոյ Պէյողլուի հայոց գերեզմանատունը և կաթողիկէ հայերու տապանագիրներ, Հանդես ամսօրյա, Վիեննա, 1911, 1-12, հուլիս- օգոստոս, էջ 464:
[11] Հ.Ս.Կոզեան,Հայոց եկեղեցին, Բեյրութ 1961. էջ 486:

Հոգին Սուրբ լուսատու ըլլայ իրենց, և Հոգւոյն Սրբոյ զօրությամբ ինչպես որ Ս.Սեբեստրոս և Ս.Գրիգոր եղան միաբան, նույնպես Աստուած միաբանէ զձեզ ի խաղաղության, ի սեր և ի միութեան, ինչպես Կոստադինոս ինքնակալ և Տրդատ ինքնակալ միաբանք և դաշնակիցք ընդ միմեանս եղան,ըստ նմի օրինակի և դուք միւ անգամ հաստատեսջիք զգործս նոցա ի միութիւն, և մեք միտագոյնք եմք ի գործս ինքնքկալացս այսոցիկ և այժմ՝ որպես և զիարդ լուսաւորեսցէ սուրբ Հոգի զսուրբ Սինհոդոսն,այնմ պատրաստ եմք հնազանդել»:[12] Այս խոսքերը հոգևոր սիրուց ավել բան չեն նշանակում: Իսկ հյուպատոսին ուղղված թղթում գրում է. «Սուրբ Հոգին թող լուսավորե անոնց միտքը,այնպես թող գործեն, որպես զի սեր և միութիւն և եղբայրութիւն ըլլայ ի մեջ քրիստոնէից», կաթողիկոսը ոչ հավատի, ոչ պապի իշխանության, ոչ հռոմէադավանություն ընդունելու մասին չի խոսում: Պապին ուղղված գիր կամ պատիվ ու հարգանք կամ հպատակություն հայտնող հայտարարություն չի գրում:[13]

Այսպես կազմվեց 4 հոգուց բաղկացած պատգամավորությունը, որի ղեկավար սակայն նշանակվեց քահանայապետի փոխանորդ Ֆրա Հակոբը, առանց որի հայերը չէին կարող ներկայանալ քահանայապետին: Այսպիսով, միաբանություն կոչված ժողովին ուղարկված հայոց պատվիրակությունը ղեկավարում էր լատին կրոնավորը և նա էլ որոշումներ էր ընդունելու: 1438թ. դեկտ.1-ին այս կիսալատին, կիսահայ պատվիրակությունը պապին ուղղված նամակը վերցնելով, ճանապարհվեց Կ.Պոլիս որ կայսեր հետ գնան, բայց կայսրը արդեն մեկնել էր և ստիպված մենակ գնացին Ֆլորենցիա:[14]

Այս ժողովին մասնակցող հույները եկել էին օսմանյան վերահաս վտանգից ազատվելու համար օգնություն ստանալու, իսկ պապը ձգտում էր իր իշխանությունը տարածել Արևելքում և իր անձնական թշնամիների հանդեպ առավելության հասնել:[15]

1439թ. փետրվարի 26-ին առաջին նիստը գումարվեց, ուր քննարկվեց դավանական խնդիրներ, բայց պապական իշխանության կետը ծանր ընդդիմության բախվեց: Հույները չէին ուզում հաստատել,որ Հռոմի աթոռը առաջինն է, իսկ դա պապի գլխավոր նպատակն էր. քանի որ պապը այդպիսով գերիշխանություն ձեռք կբերեր բոլոր եկեղեցիների հանդեպ: Հունիսի 12-ին մահա-

---

[12] Ա.Վ.Պալճեան, Պատմություն կաթողիկե վարդապետության ի Հայս և միության Նոցա ընդ հռոմեական եկեղեցիոյ ի Ֆլորենտեան Սինհոդոսի, Վիեննա, 1878,էջ 86-89:
[13] Մ. Օրմանեան,Ազգապատում, էջ 2080-2081:
[14] Հ.Ն.Ակինյան, Սարգիս վարդապետ Կաֆայի, Հանդես ամսօրյա, Վիեննա, 1935, էջ 428-30:
[15] Գործք պատրիարքական Սինհոդոսի կաթողիկե հայոց, Կ.Պոլիս, 1910, էջ 26:

ցավ Հովսեփ պատրիարքը և հույները պատրաստվում էին վերադառնալ,բայց պապն ու կայսրը ծգտում էին իրագործել իրենց ծրագրերը:

Հուլիսի 6-ին պապն ու կայսրը միութենական վճիռ ստորագրեցին և հանդիսապես հրատարակեցին Ֆլորենցիայի մայր եկեղեցում: Պապը իր կոնդակը հաստատում էր կայսեր հավանությամբ և արևելյան պատրիարքների կողմից:[16] Բացատրվում էր, որ հռոմեա-կաթոլիկական ի հօրէ և յՈրդւոյ և օրթոդոքս ի Հորէ Որդու բանաձևերը նույն իմաստը ունեն և ընդունում իբր ի միոյ սկզբան է վարդապետությունը: Պատարագի և մաքրարանի մասին յուրաքանչյուր եկեղեցի իր սովորույթն էր պահում: Այսպիսով պապը կարծես թե հասել էր իր նպատակներին, կայսրը կարծում էր ապահովել է իր կայսրությունը և արդյունք էր պահանջում, սակայն իրականում պապը չուներ այն ազդեցությունը, որ Եվրոպայի բանակները շարժեր Օսմանյան տիրապետության դեմ: Հուսախաբ կայսրը բավական երկար մնաց Ֆլորենցիայում՝ փորձելով ինչ որ կերպ իրագործել իր ծրագիրը, բայց որևէ արդյունքի չհասնելով, օգոստոսի 26-ին մեկնում է Կ.Պոլիս.միայն 2 հույն եպիսկոպոս են մնում, որոնք հռոմեադավան էին:[17]

Օգոստոսի 25-ին Ֆլորենցիա հասավ հայոց պատվիրակությունը, երբ տիեզերական ժողովը վաղուց ավարտվել էր:Սակայն շատ եպիսկոպոսներ դեռ այնտեղ էին և Եվգենիոսը կազմեց մասնաժողով և հրամայեց մի քանի գիտուն մարդկանց խոսել հայոց պատվիրակների հետ և ներկայացնել ժողովի որոշումները: Հայ պատգամավորները ծանոթացան ժողովի հավատի և բարեկարգության մասին տված վճիռներին, ընդունեցին այն կետերը որոնց շուրջ միաբանվել էին հռոմեակաթոլիկական և օրթոդոքս եկեղեցիները: 1439թ. նոյեմբերի 22-ին, հայերի հասնելուց 3 ամիս հետո, տեղի ունեցավ այսպես կոչված միությունը: Եվգենիոսը իր անունով կոնդակ հրատարակեց, հասարակ կոնդակների ծևով, որը ոչ ժողովական կանոնի ձև ուներ և ոչ էլ նախապես նշված էին պատգամավորների ստորագրությունները: Այս պատճառով այն սովորաբար անվանում են Հրահանգ առ Հայս:[18] Կոնդակը սկսվում է հետևյալ բառերով. «Ցնծացեք առ Աստված, զի օգնական է մեր, աղաղակեցեք առ Աստված Հակոբայ ամենեքին, որք ընդ ամենայն տեղիս կոչեցեալքդ էք Քրիստոնեայք»: Կոնդակի սկզբում նշվում է, որ 900 տարի բաժանված Հայոց եկեղեցին Հռոմի հետ է միանում: Դա նշանակում էր, որ մինչ այդ միությունն չի եղել, ինչը հերքում է մինչ այդ տեղի ունեցած տիեզերական ժողովները: Ապա

---

[16] Մ. Չամչյան, նշվ.աշխ. էջ 479:
[17] Մ. Օրմանեան, Ազգապատում, էջ 2075:
[18] Անդ, էջ 110:

պապը նշում է, որ հայերը անձուկ փափագով ուղարկեցին պատգամավորներ, ովքեր բազում դժվարություններով եկան՝ ցանկանալով հաստատել եկեղեցիների միություն: Մինչդեռ եկողները կես հայ կես լատին էին. որոնց ղեկավարում էին լատինները և ոչ էլ ուղարկված էին Սսի կաթողիկոսի կողմից: Ապա առաջարկեց ընդունել միության բոլոր կետերը.

1.Քրիստոսի և Հոգւոյն Սրբոյ աստուածութիւնը երեք ժողովների համեմատ. «Մի Աստված,հայր ամենակալ, արարիչ երկնի և երկրի, և ի մի Տեր Յիսուս Քրիստոս յՈրդի Աստծոյ միածին և ի Հօրե ծնեալ նախքան զամենայն յաւիտեանս»: 2.Քրիստոսի 2 բնության վարդապետությունը: 3. Երկու կամաց վարդապետությունը: 4.Քանի որ հայոց եկեղեցին ընդունում էր առաջին երեք ժողովները միայն, ապա այժմ ընդունում էր Քաղկեդոնի ժողովի և Հռոմի կողմից գումարած բոլոր ժողովները: 5.Ընդունվում էր եկեղեցու 7 խորհուրդները՝ Մկրտություն, Դրոշմ, Հաղորդություն, Ապաշխարություն,Վերջին Օծում, Կարգ և Ամուսնությունն: Բացի վերջին Օծումից, մյուս 6-ը վաղուց գործածվում էր հայոց եկեղեցու կողմից: 1.Մկրտություն-պահանջվում էր ընդունել Ես մկրտեմ զքեզ ձևը, բայց և Մկրտի ծառայս ձևը չի մերժվում: 2.Դրոշմի մեջ իրավունքը վերապահվում է բացառապես եպիսկոպոսին, բայց հայոց եկեղեցում Դրոշմը կատարում էր քահանան:[19] 3.Հաղորդություն-նշանակում է ժողովրդի միավորում Քրիստոսի հետ. քանզի ջուր նշանակում է ժողովուրդ:Եվ քանի որ գինին Քրիստոսի արյունն է,ապա խառնելով ջուրն ու գինին ժողովուրդը միանում է Քրիստոսին: 4.Ապաշխարություն կամ խոստովանություն. կատարվում է քահանայի առջև և նա արձակում է ապաշխարողին մեղքերից: 5.Վերջին Օծում: 6. Կարգ կամ Ձեռնադրություն: 7.Ամուսնություն,որը նշանակում է երեք բան. որդեծնություն և զավակների կրթություն, հավատարմություն, որ պետք է պահեն ամուսինները, անբաժանություն, քանի որ եկեղեցում կատարված ամուսնությունը մշտական է:[20]

Այնուհետև հայերի վրա է տարածում հույների հետ հուլիսի 6-ին հաստատած միությունը՝ նշելով, որ բաժանված արևմտյան և արևելյան եկեղեցին նորոգվեց, խաղաղություն և միաբանություն հաստատվեց: Սահմանվեց, որ սուրբ աթոռն ու Հռոմի Քահանայապետը ունի գլխավորություն և Եվգենիոսը Քրիստոսի ճշմարիտ փոխանորդն է երկրի վրա: Ապա պարտադրվում էր,որ հայերը ևս տոնեն Ավետումը, Հովհաննեսի ծնունդը, Քրիստոսի ծնունդն ու հայտնությունը, Տեառնընդառաջը: Հայտարարվեց, որ հայ պատգամավորները

---

[19] Ա.Վ.Պալճեան, նշվ.աշխ., էջ 114-116:
[20] Գործք պատրիարքական Սինհոդոսի, էջ 39:

հայոց կաթողիկոսի անունով հաստատեցին այդ կետերը՝ ընդունելով կամ մերժելով այն, ինչ որ Հռոմեականաթոլիկ եկեղեցին կընդունի կամ կմերժի:

Հայ պատգամավորները, հետևելով լատին պատգամավորներին, ստորագրեցին Եվգենիոսի կոնդակը, ոմանք ստորագրեցին հանուն մեր և հանուն մեծի կաթողիկոսին մերոյ և Ամենայն հայոց: Ստորագրել են նաև Սարգիս և Թովմաս վարդապետները. «Արդ ես Սարգիս վարդապետս, որ եմ դեսպան հայոց կաթողիկոսին, և աթոռակալ Կաֆայի, այս սահմանս գրեցաւ ձեռամբ իմով»: «Ես Թումայ Վարդապետս վկայ եմ, և դեսպան այս բանիս ձեռամբ իմով գրեցի»:[21] Սա պաշտոնական միություն էր Հայոց եկեղեցու և Հռոմի Պետրոսյան աթոռի միջև:

Երբ Եվգենիոսը տվեց այս կոնդակը և որում նշվում էր, որ հայ պատգամավորները կաթողիկոսի անունից են որոշումներ ընդունում, հայոց կաթողիկոս Կոստանդին Զ Վահկացին արդեն մահացել էր. 1439թ. ապրիլի 20-ին, այսինքն մինչ Ֆլորենցիայի ժողովը և հայոց պատվիրակության Ֆլորենցիա հասնելը և այն ինչ կատարվում էր կաթողիկոսի անունով, վավերական հիմք չուներ: Բացի միության վերաբերյալ կոնդակից, պապը 1439թ. դեկտեմբերի 15-ին Կոստանդին կաթողիկոսին ուղղված թուղթ է գրում, այն մասին որ միությունը կատարված է, իր ուղարկած պատգամավորները ետ են դառնում: Սա փաստորեն հանգուցյալին ողղված գիր էր: Մեկ գիր էլ ուղարկում է Կաֆա և լատիններին հրահանգում էր համերաշխ ապրել հայերի հետ:[22] Պապը պատգամավորներին տվեց մեծ ընծաներ, մասնավորապես Սարգիս վարդապետին տվեց չքնաղազարդ մի խաչ, որում կար Քրիստոսի խաչափայտից մասնիկ:[23]

Պատգամավորները, վերցնելով Եվգենիոսի կոնդակը և ընծաները, ճանապարհվեցին Հայաստան: Նրանք պետք է կաթողիկոսին ողղված նամակն ու միության կոնդակը տանեին Սիս՝ հանձնելու հայոց կաթողիկոսին,սակայն այդպիսի բան չեղավ: Նրանք գնացին Կաֆա՝ կատարված գործերի մասին տեղեկացնելու Կաֆայի ճենովացի կառավարչին: Դա հաստատում է, որ նրանք միայն անունով էին հայոց կաթողկոսի ուղարկած պատգամավորները, իրականում նրանք ճենովացի կառավարչի պատգամա-վորներն էին: Սարգիս վարդապետը մնաց Կաֆայում, ս.Անտոնի վանքում և սկսեց քարոզել միության գաղափարները: Հայտնի չէ թե երբ և ինչպես է այս կոնդակը հասցվել Սիս: Մի բան ստույգ է, որ Հայաստանում այս միության ազդեցությունը չի հիշա-

---

[21] Մ. Օրմանեան, Ազգապատում, էջ 2085:
[22] Ա.Վ.Պալճեան, նշվ.աշխ., էջ 141:
[23] Մ. Չամչյան, նշվ.աշխ., էջ 481:

տակվում:[24] Այս միությունը չի հաստատվել կաթողիկոսի կողմից. Ինչպես տեսանք Կոստանդին Վահկացին մահացել էր, նրանից հետո կաթողիկոս դարձավ Գրիգոր Թ. Մուսաբեգյանը (1439-1441 թթ.): Ապա 1441թ. էջմիածնում հրավիրվեց ազգային ընդհանուր ժողով և կաթողիկոսական աթոռը հաստատվեց էջմիածնում,կաթողիկոս ընտրվեց Կիրակոս Վիրապեցին (1441-1443 թթ.): Եվ կրկին միության հաստատման վերաբերյալ տեղեկություն չկա: Միայն 150-200 տարի հետո հիշատակվում է, որ հայերը պահպանում են այս միությունը, ինչի մասին սակայն վկայություն չկա: Եթե այս միությունը կայացել է, ապա արդյոք Կոստանդին Զ Վահկացին ինքնուրույն, առանց ազգային ժողով գումարելու, առանց ազգի համաձայնության կարող էր հայոց եկեղեցու դրությունը փոխել:[25]

Ընդհանուր հայտարարի բերելով շարադրվածը, կարելի է նշել, որ հիշյալ կոնդակով չի կարող հաստատվել միություն հայոց և հռոմեական եկեղեցիների միջև: Այս միությունը ավելի շուտ վերաբերվում էր Կաֆայի հայերին և ոչ ամբողջ հայությանը: Հայոց պատվիրակությունը բուն ժողովին չի մասնակցել, ընդամենը այդ ժողովում ընդունված որոշումների վերաբերյալ կոնդակ էր գրվել: Ուստի կարող ենք եզրակացնել, որ Ֆերրարա-Ֆլորենցիայի ժողովը օրինական հիմք չունի և դրանով չէր կարող միություն հաստատվել հայոց և հռոմեակաթոլիկ եկեղեցիների միջև :

---

[24] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 629:
[25] Հանդես ամսօրյա, 1935թ., էջ 466: